ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Եղեգնաձոր 29 մարտ 2022թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստի

Նիստը վարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյանը: Նիստի աշխատանքներին մասնակցում են հանձնաժողովի 11 անդամներից 9-ը:

Հրավիրված են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս. Մարգարյանը, Եղեգնաձորի, Վայքի, Արենիի, Ջերմուկի, Եղեգիսի համայնքապետարանների սոցիալական աշխատողները, Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի սոցիալ-առողջապահական բաժնի վարիչ Քրիստինե Իսպիրյանը, <<Մանկական զարգացման Հիմնադրամի>> ներկայացուցիչ Սոնա Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 369-Լ և 2021թ. սեպտեմբերի 30-ի N1621-Լ որոշումներով հաստատված միջոցառումների կատարման ընթացքը ՀՀ Վայոց ձորի մարզում: /Ց. Բաբայան/
2. Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 2022թ. ՀՀ Վայոց ձորի մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծրագրի իրականացման մասին /Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի սոցիալ-առողջապահական բաժնի վարիչ Քրիստինե Իսպիրյան, Հայկական Կարմիր խաչի ընկերության Վայոց ձորի մարզային մասնաճյուղի գործադիր տնօրեն Ս.Հովհաննիսյան/:
3. Մանկական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ հոգեբանական աջակցություն>> և <<Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում>> ծրագրերի վերաբերյալ/ներկ. Սոնա Զաքարյան/:
4. Քննարկումներ:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 369-Լ և ՀՀ կառավարության 2021թ. սեպտեմբերի 30-ի N1621-Լ որոշումներով հաստատված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ Վայոց ձորի մարզում և առաջարկեց համախմբել մարզային իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, սոցիալական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների ջանքերը աշխատանքների իրականացման համար:

Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի սոցիալ-առողջապահական բաժնի վարիչ Քրիստինե Իսպիրյանը ներկայացրեց Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 2022թ. ՀՀ Վայոց ձորի մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծրագրի իրականացման մասին տեղեկատվությունը: Ծրագիրը իրականացվում է Եղեգնաձոր խոշորացված համայնքում:Ներկայացրեց ծրագրի շահառուների ընտրության ընթացակարգը, մատուցվող ծառայությունները: Անդրադարձ կատարվեց նաև ՀՀ Վայոց ձորի մարզում Հայկական կարմիր խաչի կողմից իրականացվող մյուս ծրագրերին:

Սոնա Զաքարյան ներկայացրեց Մանկական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ հոգեբանական աջակցություն>> և <<Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում>> ծրագրերի աշխատանքները:

Քննարկումների ժամանակ Եղեգիս համայնքի սոցիալական աշխատող Ա. Սմբատյանը առաջարկեց Հայկական Կարմիր խաչի ընկերությանը ծրագրի իրականացման տիրություն ընդգրկել նաև Եղեգիս համայնքը, որտեղ շատ են կարիքավոր տարեց և համանդամություն ունեցող անձինք:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Պարբերաբար տեղեկատվություն հավաքագրել ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 369-Լ և 2021թ. սեպտեմբերի 30-ի N1621-Լ որոշումներով հաստատված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ:
2. Համագործակցել հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայություններ մատուցող, սոցիալական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը բարելավելու, համատեղ ծրագրեր իրականացնելու, հիմնախնդիրները վեր հանելու և դրանց լուծման ուղղությամբ աշխատանքներ տանելու համար:
3. Համայնքների սոցիալական աշխատողների հետ համատեղ համայնքներում իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն ուղղված իրավական դաշտի վերաբերյալ և շահառուներին հնարավորիս հանգամանալից ներկայացնել իրենց իրավունքների, նաև մարզում իրականացվող ծրագրերի մասին:

Հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան